180 Քրիստո՛ս, ո՞վ չգիտե անունը Քո

1. Քրիստո՛ս, ո՞վ չգիտե անունը Քո
Մարդկանց մեջ, այս տխուր աշխարհում,
Եկար և զոհեցիր կյանքը Քո,
Որ չմնանք խավարում:

Քրիստո՛ս, Քո անունը ի՜նչ թանկ է ինձ,
Քրիստո՛ս, Քո սերը ի՜նչ քաղցր է ինձ,
Քրիստո՛ս, Դու չես ուզում Քեզ անծանոթ
Թողնել այստեղ ոչ մեկին:

2. Քրիստո՛ս, լուսավորի՛ր ինձ Քո սիրով,
Քո շնորհքով լցրո՛ւ դատարկությունն իմ,
Որ խոսքդ տարածվի իմ միջոցով,
Եվ ապրեմ կյանքով երկնային:

3. Ուղղի՛ր քո հայացքը դեպ Գողգոթա,
Իմ եղբա՛յր, լռությամբ Նրան նայի՛ր,
Այդ արյունը թափվեց մեզ համար,
Որ մենք լինենք երջանիկ: